ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"02" հուլիսի 2025թ. N 30-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 87-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 30-ի N 47-Լ հրամանով հաստատված N 1 հավելվածի 23-րդ կետի «ժա» ենթակետը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հ. Մովսիսյանի 2025 թվականի հունիսի 11-ի N Ֆ-378/2025 գրությունը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Վարդանյանի 2025 թվականի հուլիսի 1-ի ՈՆ/26.1/2916-2025 զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը հաստատելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունվարի 31-ին հաստատված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 87-Լ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

7/2/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«02» հուլիսի 2025թ.
N 30-Լ հրամանի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2020 թ. դեկտեմբերի 25-ի N 87-Լ հրամանի

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ

ՀՀ դրամ

h/h	պաշտոնի անվանումը	հաստիքային միավոր	պաշտոնային դրույքաչափը	ընդամենը ամսական (աշխատավարձ)
1	2	3	4	5
1	Տնօրեն	1.0	400,000	400,000
2	Գլխավոր հաշվապահ	1.0	225,000	225,000
3	Տնօրենի օգնական, ՄՌԿ և գնումների մասնագետ	1.0	150,000	150,000
4	Հավաքարար	0.5	110,000	55,000
	Հաշվառման և օգտակար հանածոների պետական կադաստրի բաժին (ՀՕՀՊԿ)			
5	Բաժնի պետ	1.0	200,000	200,000
6	Գլխավոր մասնագետ	1.0	155,000	155,000
7	Գլխավոր մասնագետ	1.0	155,000	155,000
8	Առաջատար մասնագետ (ֆոնդապահ)	1.0	140,000	140,000
9	Առաջատար մասնագետ	1.0	135,000	135,000
10	Առաջատար մասնագետ	1.0	135,000	135,000
	Ընդամենը	**9.5**		**1,750,000**

Հաստիքների ընդհանուր քանակը **10**

«ՀԵՖ» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ. Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ Գ. Ավագյան

ՄՌԿ մասնագետ՝ Ն. Միլիտոնյան